

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԱՐԺԵՔԱՆՈՐ ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հայ հարուստ մատենագրական ժառանգութեան մէջ շատ կարեւոր տեղ ու արժէք ունեն քերականական բնոյթի մեզ հասած բազմաթիւ երկերը : Այդ առաւելապէս բացատրելի է Հին և Միջին Դարերի ուսումնագիտական կեանքում քերականագիտութեան ունեցած առաջնակարգ դերով ու նշանակութեամբ : Քաջ յայտնի է, որ քերականութիւնը, իրք ուսումնական Եռևակ համակարգի հիմնական նիւթ, այդ ժամանակ ընդգրկման շատ աւելի լայն շրջադիր ունէր եւ իր մէջ ներառում էր զիտական այլ ճիւղեր եւս, ինչպէս Հռետորութիւն, գրականութեան, երաժշտութեան ու արուեստի տեսութիւն և այլն : Այս առումով էլ յիշեալ բնոյթի երկերի ուսումնասիրութիւնը աւելին է, քան սոսկ քերականագիտական եւ լեզուագիտական մի հետազօտութիւն :

Այլպիսին է մարտաւանդ գրախօսուող աշխատութիւնը¹ : Այս պարագային լրացոցիչ գործօններ էլ կան, որոնք անհրաժեշտութիւն են ստեղծել անդրադառնալու խիստ կարեւոր յարակից խնդիրների : Այնքանով որ հրատարակուող բնագրի հեղինակը՝ Յովհաննէս Քոնսեցին Ռմակիթուուական շարժման պարագլուխներից մէկն է եւ բնագրիր՝ այդ միջավայրի ծնունդ, եւ, մանաւանդ, այնքանով որ այս շարժման պատշաճ հետազոտութիւնն առ այսօր դեռ չի իրագործուած², հրատարակիչները իրաւացիօրէն մեկնել են նոեւ այս նըլկատառութիւններից եղնելով :

Գրքի ընդարձակ նկրածական ուսումնասիրութիւնը ըստ այսօ ունի երկու հիմնական մաս՝ պատմա-բանասիրական և քերականագիտական. առաջնի հեղինակը Մաշտոցեան Մատենադարանի Տնօրէն Ակադեմիկոս է. Խաչիկեանն է, իսկ երկրորդի հեղինակը՝ Երեւանի Համալսարանի աւագ դասախոս, բանասիրական զիտութիւնների թեկնածու Սուրէն Աւագեանը, երկուքն էլ՝ իրենց մասնագիտութեան լաւագոյն հեղինակութիւններից : Առաջին մասում իտացուած, բայց հիմնական բոլոր ընդգրկումներով տրուած է Ունիթուական շարժման ակունքի (Եւրոպայի) և ծաւալման նոր միջնավայրի (Երեւելեան

¹ Յովհաննես Քոնեցի, Յաղագո քերականին, բնադիրը Հրատարակութեան պատրաստեց Լ. Ս. Խաչիկեանը, Ներածութիւնը՝ Լ. Ս. Խաչիկեանի և Ս. Ա. Ալագեանի, Երևան, 1977:

² Այս առնչութեամբ մասնաւոր ուշագրութեան արժանի են նոր հրատարակութիւններից հետեւեալ երկուսը -

ա. Լ. Խաչիկեան, Արտապի Հայկական իշխանութիւնը և Մործորի դպրոցը, «Բանքը Մատենադարանի», 1974, № 11, էջ 125-210:

բ. Հ. Գարբիկելսան, Հայ փիլիսոփայական մտքի պատմութիւն, Հաս-
շ. Երևան, 1958, էջ 114–121:

Հայաստան) ընդհանուր գիտա-գաղափարական իրավիճակի յատակ պատկերը : Հիմնաւորութեած եզրակացութիւնն այն է, որ Հայ գիտական միտքը դեռ աւելի վաղ ժամանակներից հնարաւորութիւն է ունեցել հաղորդակից լինելու հին յունական դիտութեան եւ իմաստասիրութեան նոււածումներին, ըստ մեծի մասին Արքաստուէլի, Պղատոնի, Զենոնի, Պորփիրի, Դաւիթ Անյաղթի, Թեոն եւ Փիլոն Աղեքսանդրացիների, Անանիա Շիրակացու, ինչպէս նաև եկեղեցական հայրեր Բարոնդ Կեսարացու, Գրիգոր Նիւսացու, Յովհան Ռոկերեանի, Կիւրեղ Երուսաղէմացու եւ այլոց բազմաթիւ երկերի միջոցով : Թարգմանուել եւ յօրինուել էին իմաստասիրական, գիտական, աստղաբաշխական, ալքիմիայի, բժկութեան, կենդանական եւ բուսական աշխարհի, նոյնիսկ ձիարուծութեան վերաբերեալ աշխատութիւններ : Հոգեւոր մշակոյթը բարձր զարգացում էր ապրել գրականութեան, մանրանկարչութեան, ճարտարապետութեան, երգարուեստի մարզերում : Ուսումնագիտական բարձր բնոյթի արդինաշատ կենտրոններ էին ստեղծուել : Ուստի, Միջին Դարերի Հայաստանը պատրաստ էր խանդավառութեամբ ու ճարաւով գիմաւորելու գիտական համեմատարար աւելի բարձր մակարդակի հասած զարգացած աւտուպետական Եւրոպայի կրօնա-աստուածաբանական եւ գիտա-գիլիսովիայական աւանդները : Ունիթոռները հմտորէն օգտագործեցին այս խիստ նպաստաւոր նախադրեալը իրենց ծաւալապաշտական նպատակների համար, թէպէտ եւ, ինչպէս չատ տեղին ու ճիշդ եզրակացուած է գրախօսուող երկի մէջ, որոշ առումով խթանեցին եւրոպական գիլիսովիայական ու գիտական մտքի ներթափանցմանը հայկական աշխարհ : Համեմատարար չատ կարճ ժամանակահատուածում Քոնայի ու Ծործորի մէջ զիտա-մշակութային նոր պայմաններ առաջացան, բազմաթիւ ծաւալուն երկեր հայերէն թարգմանուեցին եւ տեղում յօրինուեցին նորերը : Գրքում այս կապակցութեամբ տրուած է հետեւեալ զգաստ զնահատականը. «Դրսանք [վերսյիշեալ երկերը — Փ. Ա.] ուշագրաւ տուեալներ պարունակելով ժամանակակից կեանքի պատմա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական երեւոյթների ուսումնասիրութեան համար, միաժամանակ նոր լոյս են սփոռում այն ուղիների վրայ, որով զարգացած ֆէոդալիզմի ժամանակաշրջանի Հայ գիտական միտքը նոր հնարաւորութիւններ է ձեռք բերում հաղորդակցուելու անտիկ դրականութեան եւ իմաստաբրութեան որոշ աւանդոյթների, զգալի չափով ընդարձակում հետաքրքրութեան իր շրջանակները եւ համալրում բնական ու հասարակական երեւոյթների մասին գարերի ընթացքում կուտակուած զիտելիքների իր զինանոցը»³: Խնչքան էլ ընդգիմութեան եւ արդելքի են հանդիպում զրանք, այնուամենայնիւ չատ չանցած մուտք են գործում ոչ միայն առանձին կրօնական աղեցիկ գործիչների խուցերից ներս, այլեւ վանական բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները, ուսումնասիրուում ու մեկնարաւուում են⁴: Միայն Բարթուլմէոս Մարաղացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» երկը Հայ ընթերցողին չատ լայն հնարաւորութիւններ է տալիս հաղորդ լինելու Արքաստուէլի տասից աւելի երկերի, որոնց մասին մինչ այդ նա ոչինչ չգիտէր, եւ ծանօթանալու տիեզերքի, երկրի, երկնքի, բուսական ու կենդանական աշխարհի, իրեն շրջապատող բնական բազմաթիւ երեւոյթների այնպիսի կարեւոր մանրամասնութիւններին, որոնք չէին կարող չգրաւել նրան եւ չմղել նոր անյայտութիւնների իմացութեան : Նման երկեր ընթերցե-

³ Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, էջ 30 :

⁴ Անդ, էջ 34 :

լու և, մանաւանդ թարգմանելու համար հարկ պիտի լինէին նոր լեզուների ակրապետելու եռանդ ուն ջանքեր, որոնք իրենց հերթին պիտի նպաստէին աւելի մօտիկից եւ աւելի որոշակի ծանօթանալու եւրոպական գիտական-փիլիսոփայական, կրօնական ու աստուածարանական նուանումներին նոյնիսկ հայերէն չթարգմանուած երկերի միջոցով։ Այնպէս որ, հայագիտութեան մէջ յաճախ ծառացած այս հարցը ստանում է իր միանգամայն արդարացի եւ պատմաքննուկանորէն ամբողջապէս հիմնաւորուած պատսխանը, որը նոր դուռ է բացելու այս ուղղութեամբ կատարուելիք հատազար ծաւալուն որոնումների։

Նոյնչափ իրաւացի եւ գիտականորէն անառարկելի են Ունիթոռական շարժման կրօնական եւ ազգային-քաղաքական կողմնորոշմանն ու հետեւանքներին արուած զնահատականները։ Լինելով ԺԲ. Գարերի ընթացքում Կիլիկիայում կաթոլիկ Եկեղեցու ծաւալապաշտական նկրտումների շարունակութիւնը, Ունիթոռական շարժումը նոյնպէս նպատակ ունէր Հայ ժողովրդին հատուած առ հատուած առնել իր զործունէութեան ոլորտի մէջ եւ ապա զնել Վատիկանի կերիշխանութեան տակ։ Պէտք է ընդունել, որ առաւելապէս պատմական համեմատարար նպաստաւոր պայմանների բերումով այն արագ եւ բզգալի յաջողութեան հասաւ Մարաղայի, Մործորի, Երնջակի, Քոնայի, ինչպէս նաև Աստրաներ, Զահուկ, Շահապոնք եւ այլ մի քանի զիւղերի մէջ։ Այս անգամ էլ Հայ ժողովուրդը իր զգաստութիւնը չուտ վերագտնելով, ժամանակի իր զարդացած եւ Հայրենասէր զաւակների միջոցով եռանդուն ու անդիջում պայքարի դուրս եկաւ եւ կարողացաւ դիմագրաւել օրօրի աճող վտանգը։ Այս տոփթով շատ յատկանշական ու ճշմարիտ է Ունիթոռական շարժման պարագութիւններից Բարթողմէոս Մարաղացու հետեւեալ խոստովանութիւնը։ «Հակառակ մարդիկ [իմա՝ Հայ Եկեղեցու դիրքորոշման պաշտպանները — Փ. Ա.] զմեր բանս իւրեանց զէն արարին եւ սրով մեր պատերազմեցան ընդ մեզ եւ ընդ ճշմարառութեանն»⁵։ Այսինքն Հայ Եկեղեցու արթուն զործիչները հմտանալով Ունիթոռների զրականութեանը, գիտութեանը, կրօնա-աստուածարանական ու դաւանաբանական դրոյթներին, զրանք լաւագոյնս օգտագործեցին յօդուտ ազգային Եկեղեցու եւ ժողովրդի ինքնուրոյնութեան պահպանման։ Այդուհանդերձ, մեր ազգային-քաղաքական կեանքի վրայ Ունիթոռների շարարար ներդործութեան հետևանքները իրենց տիխուր հետքը թողին։ ինչպէս յատակ ցոյց է արուած գրքում։ ի վերջոյ նրանց ջանքերով կաթոլիկացած Հայ զիւղերը ժիկ։ Դարի վերջերին նոյնիսկ մահմետականութիւն ընդունեցին⁶։

Դրեթէ հիմնովին նոր իսօսք է Յովհաննէս Քոնեցու կեանքի ու դործունէութեան եւ նրա այս զրքով լոյս ընծայուած քերականական բնագրի պատմա-քանասիրական քննութիւնը։ Յատկապէս հետաքրքիր է այն հաւատափի եղբակացութիւնը, թէ, հակառակ առ այսօր ընդունուած տեսակէտի՝ իրը Եսայի Եչեցին է Յովհաննէս Քոնեցուն ուղարկել Մարաղա, ինքը՝ Յովհաննէս Քոնեցին է անձնական կողմնորոշմամբ մեկնել այնտեղ և զարձել յիշեալ շարժման ամենազործունեայ ներկայացուցիչներից մէկը։ Այս եղբակացութիւնը կարեւոր է նաև Եսայի Եչեցու հակառանիթոռական ջանքերը ըստ էութեան զնահատելու տեսանկիւնից։

Ինչ վերաբերում է ներածական ուսումնասիրութեան երկրորդ մասին՝ Յովհաննէս Քոնեցու յիշեալ բնագրի քերականագիտական քննութեանը,

⁵ Անդ, էջ 33։

⁶ Անդ, էջ 29։

կարելի է առանց վարանելու ասել, որ այն դիտական ճշմարտապէս հմտալից եւ ամբողջական խօսք է :

Թէեւ բանասիրութեանը մասսամբ ծանօթ էր սոյն բնագիրը եւ անդամ ընդհանրացումով բնութաղրուած⁷, սակայն այսու այն ոչ միայն ամբողջութեամբ ներկայացւում է մասնագէտ ընթերցողին, այլեւ մանրազնին հետազոտուելով, ստուգապէս ճշգւում նրա տեղն ու նշանակութիւնը միջնադարեան հայ քերականական բազմաթիւ երկերի շարքում : Այն դիտում է նախորդ հայ քերականների երկերի աւանդական ուղիներից զգալիօրէն շեղուած, մտսնաւորաբր ժամանակի հայերէնի քերականական իրողութիւնները իւրովի ներկայացնող մի նշանակալից քերականագիտական երեւոյթ : Ճշգուած ու ընդդուած են մի չարք առանձնայատկութիւններ եւ նորութիւններ : Այս առնչութեամբ ուսուումնասիրողները մասնաւորաբր շեշտել են նախ քերականութեան ըմբռնման եւ սահմանման Դիոնեսիոս Թրակացուց արթատական տարրերութիւնը, բանասիրական-զրականազդիտական բնոյթի հարցերը բուն քերականութիւնից անջատելը, վանկարար եւ ոչ վանկարար հնչիւնները զիտելով՝ վանկի կազմութեան աւելի լրիւ տարրերակ մատնանշելը⁸: Բնազրի բերած կարեւոր նորութիւններից է համարւում այն, որ այստեղ անուանը մի կարգ աւելի է տրւում «Հոյովման կարգը, այն զատորոշելով Հոյովի հասկացութիւնից»⁹: Աւելի ճիշդ նկատուած ու բացայայտուած են Հոյովների արտայատած շարահիւսական յարաբերութիւնները, առաջին անդամ այստեղ են նշմարուած դերանունների հոյովումները եւ նրանց մի քանի օրինաչափութիւնները, տրուած է դերանունների նոր շարք, որը հետազայ քերականներին հիմք էլ է ծառայելի¹⁰: Բայց քերականական կարգը թէեւ պահուած է նախորդների համեմատութեամբ նոյնը, բայց բայց ձեւարանական յատկանիչները եւ խոնարհման ազիսակներում նրա փոփոխութիւնները տրուած են իւրովի¹¹: Ընդդեւում է նաև այն, որ այստեղ առաջին անդամ սահմանուած են բայերի լծորդութիւնները, դիտակացուած է նրանց դերը, մակրայի, շաղկապի եւ յօդի սահմանուածը բաւականաչափ ինքնուրոյն է¹²: Շատ ակներեւ արժանիք է, անշուշտ, որ իր սոյն բնազրի մէջ Յովհաննէս Քոնհցին հայերէնազիտութեան մէջ առաջին անդամ աշխատում է ներկայացնել հայերէնի շարահիւսական նկարագրութիւնը: Հետազայ լատինատիպ քերականական երկերը այս առնչութեամբ եւս հիմնը-ւում են սոյն բնազրի վրայ¹³: Վերջապէս, բնազրի կարեւոր աւանդներից մէկը լրն էլ, ամենայն իրաւամբ, համարւում է հայերէնի քերականական նոր տերժինների ստեղծումը¹⁴:

Բնազրի հրատարակութիւնը կատարուած է, բնական է, մէկ ձեռագրի (1350թ.) հիման վրայ, քանի որ այդ միակ ձեռագրով էլ այն հասել է մէր ձեռքը: Խնչպէս համոզիչ հաստատում են հրատարակիչները, բնազրի պահապահուած է անազարտ:

⁷ Անդ, էջ 140–141:

⁸ Անդ, էջ 54, 55, 60:

⁹ Անդ, էջ 62:

¹⁰ Անդ, էջ 66, 73, 75:

¹¹ Անդ, էջ 77, 88:

¹² Անդ, էջ 90, 91, 95, 101, 107:

¹³ Անդ, էջ 112, 132, 146:

¹⁴ Անդ, էջ 147:

Միանդամայն բարձր գնահատելով Ակադեմիկոս Լ. Խաչիկեանի և Ս. Աւագեանի պատմա-բանասիրական ու քերականագիտական այսքան լուրջ, հանդամանալից, հիմնաւորապէս պատճառաբանուած, արժէքաւոր հետազոտական աշխատանքը, այդուամենայնիւ կ'ուզենայինք երկու դիտողութիւն անել.

ա. Յովհաննէս Քոնեցու հրատարակուող բնագիրը, անշուշտ, հայերէնի շարահիւսութեան վերաբերեալ առաջին լուրջ քերականական երկն է, սակայն, կարծում ենք, որ մի քանի աւելի որոշակի եւ բնութագրական խօսք պէտք էր լինէր Վարդան Արեւելցու (ԺԳ. Դար) «Վասն բանին մասանց» քերականական աշխատութեան մասին (որն, ի գէպ, առաջին անգամ լոյս է ընծայել ինքը՝ Ակադեմիկոս Լ. Խաչիկեանը 1943թ.)¹⁵, իբրև Հայերէնի շարահիւսութեան մասին չուրջ մէկ գար առաջ ասուած խօսքի եւ առաջին քայլի¹⁶, թէկուզ շատ աւելի տարտամ, քան Յովհաննէս Քոնեցու յիշեալ բնագիրը: Այս առընչութեամբ որոշ չափով նկատառման արժանի կարող էր լինել նաև նրա «Մեկնութիւն քերականի» երկը:

բ. Մանաւանդ այն պատճառով, որ Յովհաննէս Քոնեցու սոյն բնագիրը շատ է առնչուում լատին քերականների, յատկապէս Պրիոցիանոսի, երկերին եւ հիմք է ծառայել ու մեծապէս ազդել լատինատիպ հայերէն քերականական հետազայ երկերի վրայ, խիստ անհրաժեշտ էր, որ հրատարակութիւնը ունենար իր ուսւերէն եւ, մանաւանդ, անդերէն կամ Փրանսերէն ամփոփումը: Կասկածից վեր է, որ այս հրատարակութեան չուրջ Արեւուտաքի ոչ միայն հայագէտ մանագէտները, այլև քերականագէտ-լեզուարանները մեծ հետաքրրքութիւն պիտի ցուցաբերեն, ուստի աւելի քան անհրաժեշտ էր, որ իրենց կողմնորոշման նախադրեալ տեղիքներ տրուէին որեւէ օտար լեզուով:

Տերմինների ցանկի կողքին՝ աւելորդ չէր լինի անուանացանկը:

ՓԱՑԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ

¹⁵ Լ. Խաչիկեան, Վարդան Արեւելցու «Վասն բանին մասանց» աշխատութիւնը, «Տեղեկագիր», Երեւան, 1943, № 2, էջ 80-88:

¹⁶ Գ. Զահուկեան, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները Հին եւ Միջնադարեան Հայաստանում, Ե.-Ժ. դ.դ.), Երեւան, 1954, էջ 243-250: